

# 11.

## ՀԱՅԱՏԱՌ ՀԱՅԵՐԵՆԸ՝ ՀԱՄԱՑԱՆՅՈՒՄ

### ՈՒՐԵՆ ՀԱՎՈՐՅԱՆ (ԹՄՐՈՒՄՅԱՆ)

Ներկայումս հայ մշակույթի զարգացման համար կարևորագույն խնդիր է Համացանցում հայատառ հաղորդակցման ծավալումը: Նախապես, ցանկություն կար սկսել հոգվածը «Բոլորոս մտահոգված ենք ցանցում հայատառ հայերեն հաղորդակցման խնդիրներով» արտահայտությամբ, սակայն դա կնշանակեր, մի կողմից, խոսել բոլորի անունից, և մյուս կողմից՝ ցանկալին, որպես իրականություն ներկայացնել: Եվ իրոք, եթե բոլորս ուզեինք, ո՞վ պիտի խանգարեր մեզ հայերեն գրել: Այնպես որ հայատառ հաղորդակցման սահմանափակ տարածման հիմնական և միակ պատճառը՝ ցանկության բացակայությունն է: Ինչպես ասում են՝ «Թե ուզում ես երջանիկ լինել, եղիր»: Սրանով կարելի էր հոգվածը ավարտված համարել: Իրոք, եթե չկա հայերեն հաղորդակցվելու պահանջարկ (իսկ դա նշանակում է, որ չկա հայ լինելու ցանկություն), ապա ի՞նչ իմաստ ունի խոսել հայատառ հաղորդակցվելու մասին:

Սակայն ներկայումս Ուստայնում (Web) հայերեն նյութերի քանակն աստիճանաբար աճում է: Դա հուսադրող է, և իմաստավորում է հոգվածի շարունակությունը: Ներկայումս Համացանցում կա մոտ 1 միլիոն հայերեն էջ (միայն UNICODE-ով. ArmSCII-8-ով էջերը չհաշված)<sup>1</sup>, այ-

---

<sup>1</sup> UNICODE-ը գրվածքների թվաչին տեսքով ներկայացման ժամանակակից ձևն է, որը հնարավորություն է տալիս մեկ տառատեսակի մեջ պահել բազմաթիվ գրային համակարգեր. այսինքն, բազմալեզու գրվածքներ իրագործելիս օգտվել միայն մեկ տառատեսակից: Հայոց գրանշաններին դրանում հատկացված է հատուկ բա-

սինքն այնքան, որքան մոտավորապես 10–11 տարի առաջ կար ամբողջ Համացանցում: Ի դեպ, պետք է նշել, որ սրանցից միայն 15 տոկոսն է մեր ազգային պետությանը հատկացված .am տիրույթում<sup>2</sup>: Սա յուրատեսակ սփյուռք է՝ Համացանցում. նույնիսկ մարմնապես բնակվելով Հայաստանում մեզնից շատերը գոնե վերիրային աշխարհում ձգտում են դուրս՝ .org, .net, .com և այլն: Սովորաբար դա բացատրում են .am հասցեների ավելի բարձր գնով (գրանցման գինը՝ 59 ևրո) և գրանցման քաջըշուկներով, սակայն սա պետք է դիտել սոսկ որպես արդարացում: Նախ, ազգային տիրույթներում հասցեների գներն առհասարակ գերազանցում են ճյուղային տիրույթների գներին, օրինակ՝ .com, .net տիրույթների (9 ևրո), սակայն, կան և ավելի թանկ տիրույթներ: Օրինակ, Ռուսաստանի .ru տիրույթում հասցեն արժե 89 ևրո, Դոմինիկայի .dm տիրույթում՝ 187 ևրո, Մոլդովայի .md տիրույթում՝ 199 ևրո<sup>3</sup>, այսինքն 3,5 անգամ գերազանցում է .am տիրույթի գինը. և սա դեռ չհաշված ամենամյա մուծումները: Մյուս կողմից մեր .am տիրույթում գրանցվում են հազա-

---

ժին: ArmSCII-8-ը հայատառ գրվածքների իրագործման հին ձևն է, որում հայոց գրանշանները չունենին հատկացված տեղ, ուստի և խառնվում են նույն սկզբունքով ներկայացված ալաբեզու գրվածքների հետ:

<sup>2</sup> Բնականաբար այս հարցում նման գնահատումները կարող են միայն մոտավոր լինել: Տվյալ դեպքում գնահատման հիմք են ընդունվել որոնումն «է» օժանդակ բայով (որը հայերենում ունի չափազանց մեծ հաճախություն և առկա է ցանկացած փոքրիշատե ծավալուն գրվածքում)՝ պատահում է մոտ 800 000 էջերում և «հայերեն» բառով, որը որպես լեզվի ցուցիչ նույնպես տարածված է կայքերում՝ պատահում է ավելի քան 2 500 000 անգամ: Պետք է սակայն առաջին դեպքում հաշվի առնել, որ որոշ քանակությամբ էջերում այդ օժանդակ բայն այնուամենայնիվ կարող է և չլինել, իսկ երկրորդ դեպքում «հայերեն» բառը կարող է գտնվել այլալեզու էջերում (օրինակ՝ նույն կայքի այլալեզու վարկածներում՝ որպես հայերեն վարկածի հղում): Տվյալները վերցված են ըստ Google-ի: Yahoo-ով որոնման արդյունքները մոտ 30 տոկոսով պակաս են: Բաց իրական թվերը կարող են և գերազանցել բերված տվյալները, քանի որ գործածվող հաշվեկարգերը հաճախ ցուցակավորում են միայն որոշակի պայմաններին բավարարող էջերը:

<sup>3</sup> Ըստ <http://www.europeregistry.com/domains/domains-search.htm>:

րավոր հասցեներ, որոնց տերերը **am** տառերը դիտում են, որպես **amplitude modulation** բառերի հապավում, կամ **america** բառի սկիզբ և նրանք, ովքեր դա անում են, հաստատ չեն գտնում, որ գինը բարձր է. պարզապես պետք է և վերջ՝ գրանցվում են: Մինչդեռ մենք, հայերս, սակարկում ենք և քննարկում. մնալ մեր ազգային գոտում, թէ՞ ոչ: Իսկ գրանցված է .am տիրույթում գրեթե կես միլիոն՝ հասցե՝ 450 000 <sup>4</sup>, այսինքն շուրջ 3 անգամ ավելի, քան հայերեն էջ կա .am տիրույթում: Վերջապես նույն այդ տիրույթում հասցե ունի տողերիս հեղինակը, որն ընդամենը անհատ է, մինչդեռ կան խոշոր կազմակերպություններ, որոնք հայտարարում են, թե գինը բարձր է:

Ինչևէ, եթե շնորհիվ տարբեր թվային շտեմարանների, որոնցից, թերևս ամենամեծը Հայ մատենագրությունից թվային գրադարանն է (digilib.am) և մի շարք օրաթերթերի կայքերի, հայալեզու նյութի թվայնացման և թվային տեսքով պահման գործը որոշ չափով տեղից շարժվում է, ապա բացառությամբ մի քանի հարթակների, ինչպիսիք են akumb.am-ը, zhamanc.am-ը, forum.am-ը հայալեզու (հայատառ) կենդանի շփումն այսօր Համացանցում գրեթե բացակայում է: Կավագույն դեպքում (եթե դա առհասարակ կարելի է «լավ» համարել) նամակները և ցանցային ուղերձները գրվում են լատինատառ հայերենով (այդ մասին տողերիս հեղինակն ահագանգել էր դեռևս 10 տարի առաջ Ազգային ժողովում կազմակերպված լսումների ընթացքում, բայց ինչպես տեսնում ենք, մինչ այսօր ոչինչ չի փոխվել): Հակառակ դրան օրինակ Ռուցանցում (РУСЕТ) կան հարյուրավոր ռուսալեզու հարթակներ, այն էլ մասնագիտացված. ծրագրավորողների, նկարիչների, իրավաբանների, բժիշկների և այլն:

Տխուր է վիճակը նաև Համացանցի ներկայիս արագ ընդլայնվող այնպիսի ճյուղում, ինչպիսին է առգիծ (online) wiki հանրագիտարանների ստեղծումը, ու նախ և առաջ Wikipedia-ն: Մրանք նույնպես լավ ցուցանիշ են տվյալ լեզվի վիճակը պատկերացնելու համար, քանի որ ստեղծվում են այդ լեզվի կրողների համացանցային համայնքի հավաքական ջանքերով:

<sup>4</sup> Համ <http://www.europeregistry.com/domains/domains-am.htm>

Անգլերեն Wikipedia-ան արդեն իսկ դարձել է աշխարհի ամենամեծ հանրագիտարանը, որի հոդվածների թիվը գերազանցում է հոշակավոր «Բրիթանիկայի» հոդվածների թիվը մի քանի անգամ: Թեև հոդվածների ստեղծման բնույթից ելնելով Wikipedia-ն շատերը ոչ հուսալի աղբյուր են համարում, այնուամենայնիվ դա բավական ընդգրկուն և գրավիչ աղբյուր է և այսօր արդեն Wikipedia-յի շրջանակներում ստեղծված են 250 լեզվական տարբերակներ: Եվ ահա լեզուների այդ ցուցակում հայերենը 2007 թվականի փետրվարի 24-ի դրությամբ 99-րդ տեղում է: Համեմատության համար ստորև բերված են Wikipedia-յում ներկայացված որոշ լեզուների դիրքերը: Բերված է նաև այդ լեզուների կրողների թիվը՝ նույն այդ Wikipedia-յի տվյալներով:

Լեզուն	Տեղն ըստ հոդվածների	Հոդվածների քանակը	Տեղն ըստ կրողների	Կրողների թիվը
անգլերեն	1	1 665 575	3	322 մլն
գերմաներեն	2	547 142	10	95 մլն
լեհերեն	4	352 740	26	44 մլն
ռուսերեն	11	138 012	8	170 մլն
չինարեն	12	113 139	1	885 մլն
Եսպերանտո	15	67 100	140-ից ցածր	~1 մլն
թուրքերեն	25	46 742	22	59 մլն
Եստոներեն	32	31 119	140-ից ցածր	1 մլն
բասկերեն	42	16 743	140-ից ցածր	1 մլն
իդո	45	14 524	140-ից ցածր	~0.5 մլն
վրացերեն	47	13 918	111	4 մլն
ուզբեկերեն	80	5 411	41	20 մլն
չովաշերեն	82	5 246	140-ից ցածր	2 մլն
ադրբեջաներեն	83	4 776	28	31 մլն
հայերեն	99	2 717	85	6 մլն
սանսկրիտ	110	2 025	140-ից ցածր	0. 05 մլն
օսերեն	115	1 655	140-ից ցածր	0.7 մլն

Աղյուսակից երևում է, որ թեև մեծաքանակ լեզուներն ընդհանուր առմամբ ավելի լավ են ներկայացված, այնուամենայնիվ, լեզվի կրողների

Թվի և Wikipedia-յում դրանց տեղի միջ և հստակ կապ չկա: Նույն այդ անգլերենն ըստ կրողների թվի միայն երրորդն է, իսկ համար մեկ լեզուն՝ չինարենը, միայն 12-րդն է, և զիջում է ոչ միայն 8-րդ տեղում գտնվող ռուսերենին, այլև 26-րդ տեղում գտնվող լեհերենին: Իսկ հայերենը, ոչ միայն չի հասնում իր կրողների թվի տեղին՝ 85, այլև հետ է մնում ավելի փոքրաքանակ այնպիսի լեզուներից ինչպիսիք են էստոներենը և վրացերենը: Վերջինս առհասարակ, լեզուների ցուցակում լինելով սոսկ 111-րդը Wikipedia-յում ներկայացված է 47-րդ տեղում: Հայերենից բարձր են հայտնվել նույնիսկ պետական կարգովիճակ չունեցող բասկերենը, չովաշերենը, ինչպես նաև՝ արհեստական լեզուներ էսպերանտոն և իդոն: Հայերենին հաջողվել է գերազանցել (այն էլ չնչին չափով) մեռած լեզու սանսկրիտին և օսերենին, ինչպես նաև բերված աղյուսակից դուրս մնացած դրոզներենին, աբխազերենին: Որո՞նք են այս իրադրությունն պատճառները:

Պատճառներից ամենահիմնականն, իհարկե, համակարգչային դարաշրջանի սկզբում (մեզ համար՝ դա մոտավորապես 80-ականների վերջն էր) հայերեն համակարգերի բացակայությունն էր: Անկասկած դրա պատասխանատուությունն ամբողջովին Հայաստանի ակադեմիական հաստատություններին է և երկրի կառավարությանը, որն այդ հաստատություններին համապատասխան պատվեր չտվեց: Այդ իրենց հանցավոր անտարբերության պատճառով էր, որ Խորհրդային Միության շրջանակներում հաշվողական համակարգերի գծով ամենաառաջադեմ պետությունում՝ Հայաստանում, որտեղ ստեղծվում էին ամբողջ Միության և Արևելյան Եվրոպայի երկրներում գործածվող համակարգիչներ, չստեղծվեց ազգային լեզվով աշխատող համակարգ: Անշուշտ, դրա հիմնական պատճառն այն էր, որ այդ հաստատությունների աշխատակիցների մեծ մասը թեև հայեր էին, սակայն իրենց մայրենին ոչ թե հայերենն էր, այլ ռուսերենը, և նրանց մտքով էլ չէր անցնում, որ մեր «գավառական» լեզվով իմաստ ունի ինչ-որ համակարգ ստեղծել: Կասեն, որ այդ տարիներին Միությունն արդեն քայքայվել էր և աղետալի վիճակը հնարավորություն չտվեց այդ հարցով զբաղվելու: Ի՞նչ պատասխանես: Կարելի է հիշել, թե ի՞նչ պայմաններում է ստեղծվել հայոց

առաջին տպագիր գիրքը, թե ինչ պայմաններում է հիմնադրվել Երևանի պետական համալսարանը. երբ պետություն էլ, որպես այդպիսին, չկար: Մինևույն ժամանակ կարելի է նկատել նաև, որ արդեն այդ ժամանակ հայկական համակարգեր ստեղծելու աշխատանքներ այնուամենայնիվ ընթացել են: Իհարկե առանց պետական պատվերի, այլ անհատ նախաձեռնողների ջանքերով, մինչդեռ պետական և ակադեմիական հաստատությունների ներգրումն այդ գործում եղել է միայն ամեն գնով նրանց աշխատանքներին խոչընդոտելը: Բայց դե ինչ եղել է՝ եղել է...

Իսկ ի՞նչն է խանգարում հայերին այսօր հայերեն գրել: Հայերեն հաղորդակցմանը (այսինքն, տվյալ դեպքում՝ մեքենագրմանը, մուտքագրմանը) խոչընդոտում են երեք հիմնական խնդիրներ, իրենց ենթախնդիրներով:

### 1. Հայերենն աջակցող համակարգերի բացակայությունը:

Ներկայումս այս խնդիրը աստիճանաբար լուծվում է: Այսպես, ամենատարածված Windows գործավար համակարգը սկսած Windows 2000-ից աջակցում է աշխատանքը հայերեն UNICOD-ով: Բնականաբար, նոր համակարգերի անցնելը կապված է որոշակի ծախսերի հետ, բայց սկզբունքորեն խնդիրն արդեն լուծելի է: Իհարկե, 2000-ից առաջ էլ հայերեն հնարավոր էր գրել (ArmSCII-8 այլագրմամբ). միայն ցանկություն լիներ. ի վերջո, թերթեր էին տպվում, կայքեր ստեղծվում: Առնվազն, գոնե նամակ գրելիս կարելի էր (և հիմա էլ կարելի է) գործածել այնպիսի ծրագրեր, որոնք ներառում են իրենց մեջ գործածվող տառատեսակները (Word, Acrobat): Թեև, ի՞նչ խոսք, Ց-բիթանոց համակարգերը լուրջ գլխացավանք են ստեղծում օգտվողի համար. մե՛կ ստեղնաշարի սարքավարը չկա կամ բախման մեջ է համակարգի հետ, մե՛կ համապատասխան տառատեսակը չկա, մե՛կ բազմալեզու փաստաթղթում պատահմամբ փոխվել է գրվածքի ոճը, և բոլոր լեզուները խառնվել են և փոխարենը հայտնվել են ինչ-որ անկապ նշաններ, և այլն:

Բայց եթե գործավար համակարգերի դեպքում խնդիրը թեև դանդաղ, բայց լուծվում է, ապա կիրառական ծրագրերի մեծ մասը, նույնիսկ եթե դրանք աջակցում են աշխատանքը UNICOD-ով, չեն աշխատում

կամ թերի են գործում UNICODE-ի հայերեն տառաշարով: Ինչ վերաբերում է Համացանցին, ապա տազնապալի է, որ չկան հայկական որոնիչ սարքեր, ինչպիսին են, օրինակ Yandex, Aport, Rambler համակարգերն են՝ ոռւսերենի համար: Մենք ստիպված ենք բավարարվել ամերիկյան որոնիչ սարքերի Google-ի, Yandex-ի, Altavista-ի ծառայություններով, որոնք թեև աշխատում են հայերեն, բայց հաշվի չեն առնում հայոց լեզվի առանձնահատկությունները, կամ հայ որոնողի առջև եղած խնդիրները: Պետք է հիշատակել լայնորեն գործածվող ICQ ուղերձման համակարգի հայերեն թարգմանված չլինելու փաստը: Նաև՝ բջջային հեռախոսները, որոնց հայացումն առհասարակ լուծված չի, իսկ հեռախոսներ ներկրողները գնորդներ շահելու նպատակով հպարտությամբ գովազդում են դրանց ռուսացված լինելու հանգամանքը:

2. Հիմնական գործավար համակարգերում Windows-ում, MacOS-ում, Linux-ում հայերեն գրանշաններով որակյալ տառատեսակների բացակայությունը:

Ներկայումս աշխատանքներ են ընթանում Windows XP համակարգի հայացման ուղղությամբ: Բնականաբար «մասնագետների» մեծ մասը (ցավալի է, բայց ստիպված եմ այդ բառը չակերտների մեջ առնել) բաց չեն թողնում այդ մասին իրենց հեզնանքն արտահայտելու առիթը (այսինքն՝ ՑՕ-ականներից այս կողմ մեր «մասնագետների» աշխարհայացքում ոչինչ չի փոխվել): Բայց մի բանում իրենք ճիշտ են. Համացանցում (և առհասարակ) հայոց լեզվի ապագայի համար այնքան կարևոր չէ Windows-ի օգտվողական միջերեսի (interface) հայացումը, որքան այն, որ արդեն իսկ արտադրողի կողմից յուրաքանչյուր վաճառվող համակարգ (աշխարհի ցանկացած երկրում) օժտված լինի հայերեն տառատեսակներով և հայերենն աջակցող այլ ծրագրերով: Այլ կերպ, որպեսզի Arial, Times New Roman, Courier New, Tahoma, Verdana, իսկ այսօր արդեն Vista-ի հետ տարածվող նաև Segoe UI և մի շարք այլ տառատեսակներում լինեն հայերեն տառաշարեր: Առայժմ այդ ուղղությամբ բոլոր ջանքերն ապարդյուն են անցել. նշված տառատեսակների հեղինակային իրավունքները կրող՝ Microsoft-ը և Monotype-ը նույնիսկ լսել չեն ու-

գում այդ մասին: Եվ դա այն դեպքում, երբ վերջերս ամենաբարձր մակարդակով համագործակցության մասին պայմանագիր ստորագրվեց Microsoft-ի և Հայաստանի կառավարության միջև: Հեղինակի հաստատ համոզմամբ, խնդրի լուծումն անհնար կլինի առանց Հայաստանի պետության ամենաբարձրաստիճան անձանց՝ Նախագահի և Վարչապետի անձնական միջամտության: Ներկայումս Windows-ի հետ մատակարարվում են մի երկու տառատեսակներ (Sylfaen, Arial Unicode MS)՝ հայերեն տառաշարերով, սակայն դրանք երկրորդական բնույթի են, շատերը դրանց գոյության մասին չգիտեն, ուստի և չեն գործածում: Ու դրանից բացի այդ տառատեսակները որակապես թերի են (օրինակ՝ չունեն թավ և շեղ ոճեր): չեն համապատասխանում ո՛չ կրթական, ո՛չ հայկական տառարվեստի պահանջներին և շատ դեպքերում անընթեռնելի են (հատկապես՝ Arial Unicode MS-ը):

3. Հայերեն մակագրություններով ստեղնաշարերի բացակայությունը:

Ով որ գոնե մեկ անգամ փորձել է համակարգչային ստեղնաշարով հայերեն մուտքագրել, գիտի, թե դա որքա՞ն տհաճ գործ է, եթե ստեղների վրա չեն նշված տառերը: Կա՛մ պետք է հերթով սեղմել ստեղները՝ գտնելու համար անհրաժեշտ տառը (պարզ է, որ այս դեպքում երկար գրվածք չես մուտքագրի), կա՛մ պետք է մի որևէ օժանդակ ծրագրում (օրինակ՝ KDWIn-ում) սլաքով հավաքել անհրաժեշտ բառերը, կա՛մ պարզապես՝ հիշել տառերի տեղերը:

Փորձելով լուծել խնդիրը, ոմանք ստեղնաշարերի ստեղներին կպցնում են թղթերի վրա տպված հայերեն տառեր: Ավելորդ է ասել, որ նման ստեղնաշարերի գեղագիտական վիճակը սոսկալի է. կպցված տառերի կեսը պոկված, մյուսները՝ կպչուն ժապավեններով ամրացված և այլն: Մինչդեռ հայերեն մակագրություններով ստեղնաշարեր պատվիրելը (կամ նույնիսկ արտադրելը) պարզագույն խնդիր է: Հեղինակն անձամբ աշխատել է այդպիսի մի ստեղնաշարով 10 տարի առաջ (Black Cherry անունով ինչ-որ ընկերության արտադրության): Սակայն դա եզակի դեպք էր. պահանջարկ չկա: Ռուսական տառերով ստեղնաշարի պահանջ կա,

իսկ հայերենով՝ ոչ: էլ ո՛ւր մնաց «Լեզվի մասին» օրենքը, որը պահանջում է, որպեսզի նման ստեղծաշարեր լինեն Հայաստանում: «Օրենքն» այդ «ընդունված» է արդեն շուրջ տասը տարի առաջ, իսկ հայատառ ստեղծաշարեր մինչ օրս էլ դեռ չկան:

Դա է՛լ ավելի տարօրինակ է, քանի որ այդ գործի նախաձեռնողը կարող էր լավ շահույթ ունենալ: Ըստ որոշ գնահատումների, ներկայումս Հայաստանում համակարգիչների թիվը տարեկան աճում է մոտ 100 հազարով <sup>5</sup>: Ստեղծաշարերի մանրածախ միջին գինը կազմում է մոտ \$15, իսկ մեծածախը՝ մոտ \$5: Տարբերությունը՝ \$10 է: Այս գումարի մոտ կեսը կարող է դիտվել որպես մաքուր շահույթ (հաշվարկը բնականաբար՝ չափազանց մոտավոր է): Այսպիսով Հայաստանում ստեղծաշարերի շուկան տարեկան առաժիտ է մոտ 500 000 դոլար շահույթ: Շատ չի, բայց քիչ էլ չի: Նա, ով կկազմակերպեր հայատառ ստեղծաշարերի ներմուծումը Հայաստան, կարող էր ստանալ այդ գումարի զգալի մասը: Եթե, իհարկե, վերջապես Լեզվի տեսչությունն իր առօրյա զբաղմունքից բացի սկսեր զբաղվել նաև իր անմիջական գործով, այն է՝ հայոց լեզվի պաշտպանությունը:

Բայց, քանի դեռ Լեզվի տեսչությունը դրանով չի զբաղվում խնդիրը կարող էր լուծվել արհեստավարժ մուտքագրման մշակույթի, այն է՝ փակաչ մուտքագրման եղանակի (մուտքագրում՝ առանց ստեղծաշարին նայելու, տասը մատով մուտքագրում, touch-typing) տարածման ճանապարհով: Օրինակ՝ դպրոցներում դասավանդման միջոցով: Բնականաբար, դրա համար էլ գործի պիտի անցնի Կրթության նախարարությունը): Այդ դեպքում մակագրությունների լինել-չլինելը նշանակություն չէր ունենա: Անհրաժեշտ է նաև համապատասխան ծրագրային ինքնուսույցների ստեղծում: Այս հարցերով հետաքրքրվողներին առաջարկում եմ այցելել ռուսական [www.urikor.net](http://www.urikor.net) կայքը (այս մասին տե՛ս հեղինակի երկու «Ստեղծաշարի պատմությունից» և «Մեքենագրման արհեստի մասին» կարճ հոդվածներում, որոնք ընդգրկված են «Զրույցներ համակարգչի

<sup>5</sup> Ըստ [http://chinalist.ru/facts/viewyears.php?p\\_country=10&p\\_param=1034](http://chinalist.ru/facts/viewyears.php?p_country=10&p_param=1034)

մասին» գրքի հավելվածների շարքում. դրված է [fonts.tarumian.am](http://fonts.tarumian.am) հասցեով):

Հայատառ ստեղնաշարերի արտադրման և մուտքագրման գործի հետ կապված է մեկ այլ խնդիր ևս. իսկ ի՞նչ դասավորություններ պիտի հայերեն տառերը հայտնվեն ստեղնաշարի վրա: Պարզվում է, որ այս հարցում էլ միօրինակություն չկա: Եթե մի կողմ թողնենք առանձին անհատական տարբերակները, ապա կա ստեղների երկու տարածված դասավորություն. ավանդական գրամեքենայի ձևով (typewriter), որը հաստատված է, որպես Հայաստանի ազգային հիմնօրինակ, և այսպես կոչված, հնչյունային (phonetic): Գրամեքենայի դասավորության դեպքում տառերը դասավորված են ըստ հայոց լեզվի հնչյունների հաճախությունների (ինչպես ռուսական գրամեքենայի դեպքում՝ ըստ ռուսերենի հաճախությունների), այնպես, որ ամենահաճախ պատահող տառերը լինեն ամենաուժեղ մատների մոտակայքում: Շնորհիվ այս դասավորության, ինչպես նաև՝ փակաչ մտուտքագրման, երբ համապատասխան պարապմունքների շնորհիվ մատները գտնում են հապապատասխան ստեղներն ինքնաբար, առանց որոնելու, մուտքագրման արագությունը կտրուկ աճում է և արդեն ոչ մի նշանակություն չի ունենում ստեղնաշարերի վրա հայերեն մակագրությունների առկայությունը:

Հնչյունային դասավորության դեպքում հայերեն տառերը համապատասխանեցված են լատինական տառերին: Դա արվել է, որպեսզի հայերեն մակագրությունների բացակայության պայմաններում հնարավոր լինի գտնել համապատասխան տառի ստեղնը: Արդյունքում, հայերենի ամենահաճախ պատահող «Ա» տառը հայտնվում է ստեղնաշարի եզրին, ամենա թույլ և դանդաղաշրժ մատի՝ ձախ ճկույթի տակ, իսկ ամենահազվադեպ պատահող «Ֆ»-ն՝ ուժեղ ձախ ցուցամատի մոտակայքում, ինչը բացառում է այս դասավորությունը փակաչ մուտքագրման համար օգտագործելը: Բայց ամենաանհեթեթս այդ դասավորության դեպքում այն է, որ քանի որ լատինական տառերը 26-ն են, իսկ հայկական այբուբենում կա 38 տառ, արդյունքում 12 հայերեն տառեր հայտնվում են պատահական ստեղների վրա և դրանց տեղագրությունը

միևնույնն է անհնար է լինում հիշել: Եթե դրան ավելացնենք, որ նույնիսկ այդ «հնչունային» դասավորությունն էլ տարբեր աշխատատեղերում տարբեր է, ապա պարզ է դառնում, որ նման դասավորությունը չի կարող լուրջ համարվել:

Սակայն մուտքագրողների զգալի մասը շարունակում է օգտվել «հնչունային» ստեղծաշարից: Ինչո՞ւ: Եթե պատճառը լիներ միայն սովորելու վրա ջանք թափելու ցանկության բացակայությունը (այլ կերպ ասած՝ ծուլությունը), ապա դա դեռ լավագույն տարբերակը կլիներ: Ցավոք, պատահում են հնչունային դասավորության «սկզբունքային» կողմնակիցներ: Սրանց թվում է, թե, քանի որ իրենք գործի բերումով միաժամանակ երեք լեզվով են մուտքագրում, ուստի և եթե յուրացնեն մեկ դասավորություն, ապա հեշտությամբ կմեքենագրեն բոլոր երեք լեզուներով: Այս կարծիքի միամտությունը նույնիսկ այն չէ, որ, ինչպես նկատեցինք, հայկական տառերը կիսով չափ ավել են, քան լատինականները, և տառերի զգալի մասի դասավորությունը միևնույնն է տարբեր է (հատկապես եթե դրան ավելացնում ենք նաև ռուսական տառերը), այլ այն, որ մարդու խոսքը (բանավոր և գրավոր) բաղկացած է ոչ թե հնչուններից ու տառերից, այլ վանկերից, այսինքն՝ որոշակի տառակապակցություններից, և համապատասխան տառերի իմացությունը դեռ չի նշանակում դրանց հավասար արագությունը գործածում բոլոր լեզուներում: Դա հավասարագոր է պնդման, թե որևէ լեզվի հնչունների իմացությունը բավարար է այդ լեզվով ազատ խոսելու համար: Ի դեպ, պետք է նկատել, որ եթե այդ «եռալեզու» անձանց համար առաջին տեղում լինեն հայերենը, նրանք առնվազն շահագրգռված կլինեին գործնականում ստուգել գրամեքենայի դասավորության առավելությունները, իսկ համոզվելուց հետո արդեն հազիվ թե վիճեին, սակայն քանի որ հայերենն իրենց երեք լեզուների շարքում սոսկ երրորդ է (եթե ոչ չորրորդը), իրենք նախըտրում են շարունակել վերացական վեճը՝ որպես ինքնարդարացում:

Հնչունային դասավորությունն ունի ևս մի վտանգավոր, թաքնված թերություն: Դա այն է, որ, թեև մուտքագրման արդյունքում ստանում ե-

ենք հայատառ գրվածք, սակայն մուտքագրման պահին նայում ենք լատինական տառերին և նշաններին: Այսինքն ենթագիտակցորեն ընտելանում լատինատառ հայերենին: Ճիշտ է, երբ ստեղծներին սոսնձում են հայերեն տառերը այդ վտանգը վերանում է, բայց այդ դեպքում վերանում է նաև հնչյունային ստեղծնաշարի իմաստը. եթե միևնույնն է նայելու ենք հայատառ ստեղծներին, ապա ի՞նչն է խանգարում, որ դրանք ավելի կատարյալ, գրամեքենայի դասավորությունն ունենան:

Այսպես թե այնպես, մեր ազգակիցների մեծ մասը չի պատրաստվում հրաժարվելու ստեղծնաշարին նայելով տպելուց, և հայերեն մակագրություններով ստեղծնաշարերի բացակայությունը լուրջ խոչընդոտ է մնում Համացանցում հայատառ հաղորդակցվելու ճանապարհին: Վերջերս, փորձելով նպաստել խնդրի լուծմանը, [forum.zhamanc.am](http://forum.zhamanc.am) կայքը ներդրել է մի համակարգ, որի շնորհիվ դուք ստեղծնաշարի վրա սեղմում եք լատինական տառերը, իսկ համակարգչի վահանի վրա, առանց որևէ լրացուցիչ սարքավարի, հայտնվում են հայերեն տառեր: Առաջին հայացքից սա շատ լավ հնարք է, քանի որ հնարավորություն է տալիս ցանցում հայատառ հայերենով հաղորդակցվել: Հատկապես դա հարմար է արտերկրի մեր հայրենակիցների դեպքում, որոնք, երբեմն իրավունք էլ չեն ունենում իրենց աշխատատեղերում հայերեն աջակցում տեղադրելու: Սակայն կրկին սա նշանակում է թերի ու լատինաշունչ «հնչունային» դասավորության աջակցում:

### Եզրակացություններ

Քաղաքակրթության զարգացման ներկայիս փուլում, երբ մարդու առօրյան ավելի ու ավելի է կապվում համակարգչային և Համացանցային միջավայրերին, հայ երիտասարդների նորանոր սերունդներ ընտելանում են առանց հայոց տառերի և նույնիսկ առանց հայոց լեզվի հաղորդակցվելուն, նախընտրելով այլ լեզուներ: Սա վտանգում է հայ ազգի ապագան: Թեև հայատառ նյութերի քանակը Համացանցում աճում է, սակայն այդ գործընթացը չափազանց դանդաղ է, քանի որ բախվում է մի շարք շուժոված խնդիրների: Դրանց մի մասի լուծումը կախ-

ված է միջազգային համակարգչային ընկերությունների հետ պետական մակարդակով համագործակցելուց: Նախ և առաջ, դա վերաբերում է թողարկվող ծրագրային համակարգերը հայկական գրանշաններ պարունակող որակյալ տառատեսակներով համալրելուն: Խնդիրների մյուս մասը ներազգային բնույթի է: Վերջինների հիմքում ընկած է ազգային հոգեբանական ցավալի մի բարդույթ. արհամարհական վերբերումները մայրենի լեզվի նկատմամբ: Կարևոր է նաև պետական մարմինների, մասնավորապես՝ կեզվի տեսչության և նրա անմիջական վերադասի՝ Կրթության և գիտության նախարարության թերացումը: Թվարկված խնդիրները հնարավոր է լուծել միայն, եթե Կառավարությունն իր հսկողության տակ վերցնի թվային միջավայրերում, ներառյալ՝ Համացանցում հայոց լեզվի խնդիրների լուծումը: Մոտ ապագայում ձեռնարկվելիք առաջնահերթ քայլերը պետք է լինեն.

- Հայաստանի պետության անունից համագործակցության հաստատումը միջազգային ծրագրային ընկերությունների հետ,
- Հայաստանյան բոլոր հիմնարկների ապահովումը հայատառ ստեղնաշարերով,
- կրթօջախներում արհեստավարժ հայատառ մեքենագրման դասընթացների կազմակերպումը և ուսումնական ծրագրերում ներառումը,
- Համացանցում հայոց լեզվի գործածմանը նպաստող պետական քարոզչության ծավալումը,
- Եվ ամենակարևորը՝ հայոց լեզվին վերաբերող բոլոր օրենքների անվերապահ կատարումը: